Երևանի քաղաքապետարանը Շառլ Ազնավուրի 100-ամյակին ընդառաջ հայտարարում է Շառլ Ազնավուրի հուշարձանի նախագծի ներկայացման բաց մրցույթ

Ընդհանուր տեղեկություն

Շառլ Ազնավուրի ստեղծվելիք հուշարձանը նախատեսվում է տեղադրել Երևան քաղաքի Ֆրանսիայի հրապարակի կետնրոնական մասում, որի հիմնարկեքի արարողությունը տեղի կունենա 2024 թվականին: Հայտատուներից պահանջվում է պատրաստել արձանի մանրակերտը, մանրակերտի եռադիրք լուսանկարները և անհրաժեշտ հայտաձևն ուղարկել համապատասխան էլ. հասցեին և այն ներկայացնել մրցույթին: Հայտերն անանուն կներկայացվեն մրցութային հանձանժողովին, որից հետո տեղի կունենա մանրակերտերի ցուցադրությունը և գնահատումը: Հաղթող ճանաչված հայտի հեղինակին կտրամադրվի դրամական պարգև, և մանրակերտի հիման վրա կիրականացվի հուշարձանի կառուցումը:

Յուրաքանչյուր հայտատու կարող է ներկայացնել մինչև 3 մանրակերտի տարբերակ:

Մրցութային պայմաններ

- Արձանը/մանրակերտը պետք է լավագույնս ներկայացնի Շառլ Ազնավուրին՝ ընդգծելով վերջինիս ստեղծագործական կերպարը:

- Ֆիգուրի առանձին մասերը՝ ձեռքերը, իրանը, գլուխը և այլ հատվածներ կա՛մ պետք է համաչափ լինեն՝ արտահայտելով Շառլ Ազնավուրի մարդաբանական տվյալները, կամ մանրակերտի այլ մտահղացման պարագայում՝ հեղինակը պետք է ներկայացնի իր հղացքի մանրամասնները՝ համաձայն կից հայտաձևի:

- Արձանը պետք է ներդաշնակի տեղադրման վայրին: Անհրաժեշտ տեսանելիությունն ապահովելու համար պետք է հաշվի առնել հուշարձանի և դիտողի միջև հեռավորությունը, արձանի դիմահայաց դիրքի ընտրությունը, պատվանդանի բարձրությունը, արձանի լայնությունն ու բարձրությունը:

- Արձանի գեղագիտական տեսքը պետք է նախատեսված լինի 360 աստիճանի ցանկացած անկյունից դիտելու համար:

- Արձանն ու արձանի նյութը պետք է համահունչ լինեն ընդհանուր միջավայրին և վերջինիս գեղագիտությանը:

- Ցանկալի է, որ ժեստիկուլյացիան ասոցացվի Շառլ Ազնավուրի ստեղծագործական կարիերայի կամ նրա կերպարը լավագույնս ընդգծող դրվագին:

- Ցանկալի է, որ արձանը/մանրակերտը շարժման տպավորություն ստեղծի:

Մրցութային հանձնաժողովին ներկայացվող նյութեր
(առաջին փուլ)

- Լրացված հայտաձև
- Մանրակերտի առնվազն եռադիրք լուսանկարներ

Ցուցադրությանը ներկայացնելու համար (երկրորդ փուլ)

- Գիպսից կամ պլաստիլինից պատրաստված մանրակերտ՝ ներառյալ պատվանդանը

Ժամանակացույց

Առաջին փուլ – համաձայն մրցույթի պայմանների, պետք է լրացված հայտաձևն ու մանրակերտի լուսանկարներն ուղարկել mshakuyt.dramashnorh@yerevan.am էլ. հասցեին	Վերջնաժամկետ՝ 25.07.23-ը ներառյալ
Երկրորդ փուլ – առաջին փուլը հաղթահարած հայտատուները (կտեղեկացվի նախապես) պետք է հուշարձանի մանրակերտը/երը ներկայացնեն հանձնաժողովի գնահատմանը: Ցուցահանդեսը տեղի կունենա Երևանի քաղաքապետարանում	Ցուցադրության օր՝ 28.07.23
Հաղթող հայտատուի հայտարարում	28.07.23
Հուշարձանի իրականացման աշխատանքների ժամանակացույց	01.08.23-30.09.24
Հուշարձանի հիմնարկեքի արարողություն	04.10.24

Մրցանակը

Ներկայացված լավագույն մանրակերտի հայտատուն կպարգևատրվի 3 միլիոն դրամով:

Հավելյալ տեղեկատվություն

Մանրամասների համար զանգահարեք 011514197 հեռախոսահամարին: